ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(18/1Հ)

ք.Երևան «19» հունվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ.Ասատուրյանի (անձնագիր AK 0573980, տրված՝ 26.07.2010թ., 004-ի կողմից), ով գործում է 01.06.2017թ. տրված լիազորագրի և Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հանրային հեռախոսային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված (5) հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **49 680 000 (քառասունինը միլիոն վեց հարյուր ութսուն հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, համաձայն Պայմանագրի N 1 Հավելվածի սակագնային ցանկի:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 **Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 7.13 կետով նախատեսված կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին:**

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 **Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Մովսես Խորենացու 3	Իրավ. հասցե՝ ՀՀ ք.Երևան, Տերյան 19, բն.4
ՀՎՀՀ 02647057	Գործ. հասցե՝ ՀՀ ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի	«Ամերիաբանկ» ՓԲԸ
աշխատակազմի ղեկավար	Հ/Հ 1570043102134100
	ՀՎՀՀ 00024873
	Կորպորատիվ վաճառքի
	բաժնի ղեկավար
Ա.Սահակյան _____	***Կ.Ասպտուրյան*** _____
(ստորագրություն)Կ.Տ	(ստորագրություն)Կ.Տ

Հավելված N 1
«19» հունվարի 2018 թ. կնքված
ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(18/1Հ) ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության				
Անվանումը և գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման Ժամկետը
Հանրային հեռախոսային ծառայություններ 64211100/303	դրամ	49 680 000	1	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 350-րդ օրացույցային օրը:

Ծառայությունների մատուցման սակագնային ցանկ

«U!Phone Corporate Sip Geo» 1200 հեռախոսահամարների համար, որի ամսավճարը մեկ հեռախոսահամարի համար 2500 ՀՀ դրամ, որի մեջ ներառված է 360 րոպե անվճար տեղական դեպի ՀՀ ֆիքսված ցանցեր և միջքաղաքային զանգեր: 500 հատ E1 հեռախոսահամարների ամսական ծառայության վճարը կազմում է 140.000 ՀՀ դրամ:

Հավելյալ ուղղությունների սակագները մեկ րոպեի համար ՝

- Դեպի ՀՀ ֆիքսված հեռախոսային ցանցեր 361-րդ րոպեյից սկսված-4 ՀՀ դրամ/րոպե
- Դեպի ՀՀ բջջային ցանցեր – 24 ՀՀ դրամ/րոպե
- Դեպի ԼՂՀ բջջային ցանցեր – 28 ՀՀ դրամ/րոպե

Դեպի ԼՂՀ ֆիքսված հեռախոսային ցանցեր–18 ՀՀ դրամ/րոպե

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Կատարողը պետք է ապահովի բաժանորդի ներքոհիշյալ տարածքներում արդեն իսկ գործող թվով **852 հատ SIP և 2 հատ E1**

(նախատեսված 500 հատ հեռախոսահամարների համար) ծառայությունների, քաղաքային և մարզային հեռախոսակապի ծառայություն:

h/h	Ստորաբաժանման անվանում	Հասցե	Մատուցվող ծառայության նկարագիր
1	Կենտրոնական ապարատ	ք.Երևան, Մ.Խո ենացու-3. 7 և 7ա	2 հատ E1 ծառայություն նախատեսված 500 հեռախոսահամարների համար
2	Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն	ք.Երևան, Ահարոնյան փող. 12/3	42 հատ Sip հեռախոսահամար
3	Խոշոր և միջին ՀՎՏՎ, Կազմակերպման և հսկողության վարչություն, ՀՎՍՎ թիվ 20 բաժին , Փոքր ՀՎՏՎ ՀՎՍՎ թիվ 1 բաժին	ք.Երևան, Կոմիտաս-35	94 հատ Sip հեռախոսահամար
4	ՀՎՍՎ թիվ 3 բաժին/Կենտրոն/, Քննչական վարչություն, Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչություն, ՕՀՎ 6-րդ բաժին, ՕՀՎ 8 բաժին, ՕՀՎ 9 բաժին	ք.Ե ևան,Դեղատան-3	75 հատ Sip հեռախոսահամար
5	Ներքին անվտանգության վարչություն	ք.Երևան, Անդրանիկի փող. 37/1 շենք	26 հատ Sip հեռախոսահամար
6	ՀՀ ՊԵԿ Ներքին անվտանգության վարչություն/շնագիտական կենտրոն/	ք.Երևան, Հույսիսային փ. 6	6 հատ Sip հեռախոսահամար
7	Իրավա անական վարչություն, ՀՎՍՎ թիվ 2 բաժին, ՕՀՎ 13 բաժին	ք.Երևան, Ս. Դավիթի 87ա	40 հատ Sip հեռախոսահամար
8	Փոքր ՀՎՏՎ թիվ 3 բաժին , Փոքր ~~ՀՎՏՎ թիվ 4 բաժին, ՀՎՍՎ թիվ 4~~ բաժին, ՕՀՎ 10 բաժին, ՕՀՎ 11 բաժին, ՕՀՎ 12 բաժին	ք.Երևան, Շինարարների փ. 3/1	47 հատ Sip հեռախոսահամար
9	Փոքր ՀՎՏՎ թիվ 1 բաժին, Փոքր ՀՎՏՎ թիվ 5 բաժին, ՀՎՍՎ թիվ 5 բաժին, ՕՀՎ 14 բաժին	ք.Երևան, Մոլդովական-41/3	31 հատ Sip հեռախոսահամար
10	Փոքր ՀՎՏՎ թիվ 2 բաժին, Փոքր ՀՎՏՎ թիվ 6 բաժին, ՀՎՍՎ թիվ 6 բաժի	ք.Երևան, Մանթաշյան փ. 55	29 հատ Sip հեռախոսահամար

	11	Արարատյան մաքսատուն-վարչություն	ք.Երևան, Արշակունյաց-127/21	20 հատ Sip հեռախոսահամար	
	12	Արարատյան մաքսատուն-վարչություն, Մաքսանենգության դեմ պայքարի վարչություն, Նախաբացթողումային հսկողության վարչություն	ք.Երևան, Ծովակալ Իսակովի 10	63 հատ Sip հեռախոսահամար	
	13	Արևմտյան մաքսատուն-վարչություն, ՕՀՎ 23 բաժին	«Զվարթնոց» օդանավակայան Երևան – 42	27 հատ Sip հեռախոսահամար	
	14	Հյուսիսային մաքսատուն-վարչություն	ք.Գյումրի, Խորենացի-21	18 հատ Sip հեռախոսահամար	
	15	Բավրա մաքսային կետ-բաժին	ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Բավրա	6 հատ Sip հեռախոսահամար	
	16	Արևելյան մաքսատուն-վարչություն	ք.Վանաձոր, Մոսկովյան-44	23 հատ Sip հեռախոսահամար	
	17	Այրում-Ջիլիզա մաքսային կետ-բաժին	գ.Այրում Երկաթուղային 20, ք.Ալավերդի Մադան թաղամաս (Ջ լիզա)	8 հատ Sip հեռախոսահամար	
	18	Բագրատաշեն մաքսային կետ-բաժին, ՕՀՎ 27 բ ժին	ՀՀ Տավուշի մարզ, գյուղ Բագրատաշեն	22 հատ Sip հեռախոսահամար	
	19	Գոգավան-Պրիվոլնոյե մաքսային կետ-բաժին	ՀՀ Լոռու մարզ, գյուղ Գոգավան	10 հատ Sip հեռախոսահամար	
	20	Մեղրի մաքսային կետ-բաժին	ՀՀ Սյունիքի մարզ, գ.Կարճևան Մայրուղի-4	11 հատ Sip հեռախո ահամար	
	21	Փոքր ՀՎՏՎ թիվ 7 բաժին /Աշտարակ/, ՀՎՍՎ թիվ 7 բաժին/Աշտարակ/, ՕՀՎ 24 բաժին/Աշտարակ/	ք.Աշտարակ, Պռոշյան 29	19 հատ Sip հեռախոսահամար	
	22	Փոքր ՀՎՏՎ թիվ 8 բաժին /Արմավիր/	ք.Արմավիր, Չարենցի-24	4 հատ Sip հեռախոսահամար	
	23	Փոքր ՀՎՏՎ թիվ 9 բաժին /Արտաշատ/, ՀՎՍՎ թ վ 9 բաժին/Արտաշատ/, ՕՀՎ 25 բաժին/Արտաշատ/	ք.Արտաշատ, Օգոստոսի-23, 83	19 հատ Sip հեռախոսահամար	
	24	Փոքր ՀՎՏՎ թիվ 10 բաժին /Գեղարքունիք/, ՀՎՍՎ թիվ 10 բաժին/Գավառ/	ք.Գավառ, Հերոս քազաք Նովորոսիյսկի 4	15 հատ Sip հեռախոսահամար	
	25	Փոքր ՀՎՏՎ թիվ 1 բաժին /Սյունիք/, ՀՎՍՎ թիվ 18	ք.Գորիս, Տաթևանցու-9	14 հատ Sip հեռախոսահամար	

		բաժին/Գորիս/			
	26	Փոքր ՀՎՏՎ թիվ 12 բաժին /Եղեգնաձոր/, ՀՎՍՎ թիվ 12 բաժին/Եղեգնաձոր/, ՕՀՎ 15 բաժին/Եղեգնաձոր/	ք.Եղեգնաձոր, Նարեկացի-8/3	17 հատ Sip հեռախոսահամար	
	27	Փոքր ՀՎՏՎ թիվ 8 բաժին /Արմավիր/, ՀՎՍՎ թիվ 8 բաժին/Արմավիր/	ք.Էջմիածին, Մաշտոցի-81	14 հատ Sip հեռախոսահամար	
	28	Փոքր ՀՎՏՎ թիվ 13 բաժին /Իջևան/, ՀՎՍՎ թիվ 13 բաժին/Իջևան/, ՕՀՎ 16 բաժին/Իջևան/	ք.Իջևան, Անկախության 12	21 հատ Sip հեռախոսահամար	
	29	Փոքր ՀՎՏՎ թիվ 14 բաժին /Սյունիք/, ՀՎՍՎ իվ 14 բաժին/Կապան/, ՕՀՎ 19 բաժին/Սյունիք/	ք.Կապան, Մինասյան փողոց 20 ա	17 հատ Sip հեռախոսահամար	
	30	Փոքր ՀՎՏՎ թիվ 14 բաժին /Սյունիք/	ք.Մեղրի,Անդրանիկի-2/11, 2/12	3 հատ Sip հեռախոսահամար	
	31	Փոքր ՀՎՏՎ թիվ 15 բաժին /Կոտայք/, ՀՎՍՎ թիվ 15 բաժին/Կոտայք/, ՕՀՎ 17 բաժին/Կոտայք/	ք.Աբովյան, Բարեկամության հրապարակ-1	21 հատ Sip հեռախոսահամար	
	32	Փոքր ՀՎՏՎ թիվ 15 բաժին /Կոտայք/, ՀՎՍՎ թիվ 19 բաժին/Հրազդան/, ՕՀՎ 20 բաժին/Հրազդան/	ք.Հրազդան, Սպանդարյան փ 24/1-24/2	11 հատ Sip հեռախոսահամար	
	33	ՀՎՍՎ թիվ 10 (Մարտունու բաժին)	ք.Մարտունի, Շահումյան-2	1 հատ Sip հեռախոսահամար	
	34	Փոքր ՀՎՏՎ թիվ 10 բաժին /Գեղարքունիք/, ՀՎՍՎ թիվ 17 բաժին/Սևան/, ՕՀՎ 26 բաժին/Սևան/	ք.Սևան, Սայաթ-Նովա-1/1	17 հատ Sip հեռախոսահամար	
	35	Փոքր ՀՎՏՎ թիվ 14 բաժին /Սյունիք/	ք.Սիսիան, Սիսակյան-41գ	4 հատ Sip հեռախոսահամար	
	36	Փոքր ՀՎՏՎ թիվ 14 բաժին /Վանաձոր/, ՀՎՍՎ թիվ 16 բաժին/Վանաձոր/, ՕՀՎ 21 բաժին/Վանաձոր/	ք.Վանաձոր, Վարդանանց 11	28 հատ Sip հեռախոսահամար	

37	ՀՎՍՎ թիվ 16 (Թումանյանի բաժին)	ք.Ալավերդի, Թումանյան 1ա	2 հատ Sip հեռախոսահամար
38	Փոքր ՀՎՏՎ թիվ 11 բաժին /Գյումրի/, ՀՎՍՎ թիվ 11 բաժին/Գյումրի/, ՕՀՎ 22 բաժին/Գյումրի/	ք.Գյումրի, Հովսեփյան-1	26 հատ Sip հեռախոսահամար
39	Արևմտյան մաքսատուն-վարչություն	Երևան 42, Զվարթնոց օդանավակայան	2 հատ Sip հեռախոսահամար
40	ՀՎՍՎ թիվ 21 բաժին	Արարատյան 90	1 հատ Sip հեռախոսահամար

2. Տարածաշրջանների հեռախոսահամարները պետք է լինեն ըստ մարզային կոդերի:

3. Հեռախոսահամարները պետք է լինեն առավելագույնը թվով 1200 հատ:

4. Կատարողի կողմից բաժանորդի տարածքում պետք է տեղադրվեն , կարգաբերվեն և գործարկվեն բոլոր անհրաժեշտ սարք-սարքավորումները , ինչպես նաև անցկացվեն անհրաժեշտ կապուղիները:

5. Կատարողը պետք է ապահովի տրամադրվող ծառայության անխափան աշխատանքը (Dual path redundant Service):

6. Ծառայությունների մատուցման ամսվա ընթացքում Կատարողի մեղքով (Կատարողի ցանցի անսարքությունների հնարավոր անջատումների) առաջացած թերությունների ընդհանուր ժամանակահատվածը, որը հաշվառվում է կատարողի անսարքության քարտերի համակարգում, չպետք է գերազանցի ամսական թույլատրելի սահմանաչափը՝ 4 (չորս) ժամը:

7. Բաժանորդը պետք է հնարավորություն ունենա ինքնուրույն կառավարել ծառայությունից օգտվողների իրավունքները:

8. Կատարողի կողմից տրամադրվող հեռախոսահամարները պետք է աշխատեն SIP 2.0 (RFC 3261) ստանդարտով:

9. Կատարողի կողմից տրամադրվող յուրաքանչյուր հեռախոսահամար(TRUNK) պետք է կատարողի ցանցում նույնականացվի մուտքանուն/գաղտնաբառով (digest authentication)

10. Կատարողը ք.Երևան, Մ.Խորենացու-3. 7 և 7ա հասցեների հեռախոսահամարները (500 հատ) պետք է տրամադրի 2 հատ E1 կապուղով:

11. Կատարողի կողմից տրամադրվող հեռախոսահամարները պետք է հնարավորություն ունենան աշխատել բազմագծային ռեժիմում:

12. Կատարողի կողմից տրամադրվող հեռախոսահամարները պետք է ապահովեն այփի հեռախոսակապի հիմնական հատկությունները (Call Transfer, Caller ID, Conference Call, Video call, etc.)

13. Կատարողը պետք է տրամադրի 24/7 ռեժիմով աշխատող տեխնիկական և ծրագրային առանձնացված օպերատորով սպասարկում:

14. Կատարողը պետք է ապահովի կապուղիների անցկացումը, բոլոր անհրաժեշտ սարք սարքավորումների տեղադրումը, փորձարկումը, թերությունների վերացումը և համակարգի վերջնական գործարկումը ոչ ուշ, քան ծառայության մատուցումից 10 աշխատանքային օր առաջ:

15. Նշված հեռախոսահամարները կարող են ակտիվանալ և ապաակտիվանալ պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա:

16. Ընդ որում ծառայությունների ամսվավճարը որոշվում է ըստ բաժանորդի փաստացի տրամադրված հեռախոսային ծառայությունների քանակի:

17. Հարկային հաշիվների ներկայացումը, ոչ ուշ քան ընթացիկ ամսվա մինչև 15-ը:

18. Անհրաժեշտության դեպքում՝ ըստ պահանջի պետք է տրամադրվի հաշվի մանրամասնումը՝ վերծանումը: Վերծանումը պետք է տրամադրվի միայն կազմակերպության լիազորված անձին:

19. Պատվիրատուի դիմելու դեպքում ապահովել հեռախոսահամարների մասին տեղեկությունների ստացումը ծառայություններ մատուցողի կայքի միջոցով:

20. Ծառայության մատուցումը և սպասարկումը պետք է իրականացվի համապատասխան ՀՀ Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքի:

21. Ծառայություն մատուցողը պետք է պաշտպանի հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը

22. Ֆիքսված հեռախոսակապի ծառայության ամսավճարը սկսում է հաշվարկվել ծառայությունների ակտիվացմանը հաջորդող օրվանից:

23. Ֆիքսված հեռախոսակապի ծառայության ամսավճարը հաշվարկվում է ըստ օրերի:

24. Ֆիքսված հեռախոսակապի ծառայության դիմաց վճարման եղանակը հետվճարային է:

25. Հեռախոսահամարները, անկախ դասակարգումից, տրամադրվում են անվճար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Մովսես Խորենացու 3	Իրավ. հասցե՝ ՀՀ ք.Երևան, Տերյան 19, բն.4
ՀՎՀՀ 02647057	Գործ. հասցե՝ ՀՀ ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի	«Ամերիաբանկ» ՓԲԸ
աշխատակազմի ղեկավար	Հ/Հ 1570043102134100
	ՀՎՀՀ 00024873
	Կորպորատիվ վաճառքի
	բաժնի ղեկավար
Ա.Սահակյան _____	Կ.Ասատուրյան _____
(ստորագրություն)Կ.Տ	(ստորագրություն)Կ.Տ

Հավելված 2
«19» հունվարի 2018 թ. կնքված
ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(18/1Հ) ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ՝ «____» «_____» 20 թ. Դուրս գրված N հաշիվ-ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված 2.1
«19» հունվարի 2018 թ. կնքված
ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(18/1Հ) ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
19.01.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(18/1Հ) ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

«19» փետրվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ.Ասատուրյանի (անձնագիր AK 0573980, տրված՝ 26.07.2010թ., 004-ի կողմից), ով գործում է 01.06.2017թ. տրված լիազորագրի և Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 19.01.2018թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(18/1Հ) գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.13-րդ կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1 Հաստատել Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվելիք ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից N-1 հավելվածի՝ վճարման ժամանակացույցի /կցվում է/:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրում չնշված՝ 19.01.2018թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(18/1Հ) պայմանագրի կետերը մնում են անփոփոխ:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ::

2.4. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Մովսես Խորենացու 3	Իրավ. հասցե՝ ք.Երևան, Տերյան 19, բն.4
ՀՎՀՀ 02647057	Գործ. հասցե՝ ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9
Հ/Հ 900011054013	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի	Հ/Հ 1570043102134100
աշխատակազմի ղեկավար՝	ՀՎՀՀ 00024873
	Կորպորատիվ վաճառքի
	բաժնի ղեկավար՝
Ա.Սահակյան _____	***Կ.Ասատուրյան*** _____
(ստորագրություն)Կ.Տ	(ստորագրություն)Կ.Տ

Հավելված 1
19 հունվարի 2018թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(18/1Հ)
պայմանագրի հիման վրա 19 փետրվարի2018 թ.կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգ. հոդվածը	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018 թ. ՀՀ պետական բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	4214	Հանրային հեռախոսային ծառայություններ	—	5987100	5987100	13470900	13470900	13470900	20954800	20954800	20954800	29935410	29935410	29935410	**29935410**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան _____
(ստորագրություն)Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ
Իրավ. հասցե՝ ք.Երևան, Տերյան 19, բն.4
Գործ. հասցե՝ ք.Երևան, Գ.Լուսավորիչ 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
Կորպորատիվ վաճառքի
բաժնի ղեկավար՝

Կ.Ասատրյան_____
(ստորագրություն)Կ.Տ